



Մ ՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

ՅԻՍԱԿԻ ՎԵՅԵՐՈՐԴ ԿԻՐԱԿԻ 24 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2023

ԸՆԹԵՐՑՈՒՄ ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳԻՐՔԷՆ (41.4-14)

Այսպէս կ'ըսէ Տէրը.-«Ո՛վ ըրաւ, ո՛վ իրականացուց այս բոլորը, ո՛վ որոշեց պատմութեան ընթացքը, եթէ ոչ ես՝ Տէրս, որ անոր սկիզբը դրի եւ զայն կը դեկավարեմ մինչեւ գալիք յաւիտեանը: Հեթանոսները զիս տեսան եւ վախցան, հեռաւոր ազգեր իրենց սարսափէն մօտեցան, իրարու քով եկան: Արհեստաւորներ որպէս ընկեր ու եղբայր զիրար քաջալերեցին, հիւսնը ոսկերիչին օգնեց, ձուլագործը՝ դարբինին: Իրարու ըսին. «Լաւ եղաւ այս օգնութիւնը», եւ կուռքերը իրենց տեղը զամեցին, ամրացուցին այնպէս՝ որ չչարժին: Բայց դո՛ւն, Իսրայէլ, դուն իմ ծառաս ես, ո՛վ Յակոբ, ե՛ս քեզ ընտրեցի, ո՛վ սերունդ Աբրահամի՝ զոր սիրեցի. քեզ աշխարհի չորս ծագերէն բերի, աշխարհի հեռաւոր անկիւններէն քեզ կանչեցի, ըսելով. «Իմ ծառաս ես դուն». չլքեցի քեզ, որովհետեւ իմ ընտրածս ես դուն: Հետեւաբար մի՛ վախնար, ես հետդ եմ. մի՛ շփոթիր, քու Տէր Աստուածդ եմ ես. պիտի զօրացնեմ քեզ, պիտի օգնեմ քեզի եւ իմ աջովս պիտի պահպանեմ եւ արդարացնեմ քեզ: Ահա քու բոլոր հակառակորդներդ պիտի ամչնան ու գլուխնին կախեն, իսկ քեզ ամբաստանողները պիտի կորսուին ու չքանան: Պիտի փնտռես բայց պիտի չգտնես անոնք՝ որ քեզի թշնամութիւն ըրին, պիտի չքուին, գոյութենէ պիտի դադրին քեզի դէմ պատերազմողները: Որովհետեւ ես՝ քու Տէր

Աստուածդ, քու ձեռքդ բռնած եմ եւ քեզի կ'ըսեմ. «Մի՛ վախնար, պիտի օգնեմ քեզի»: Մի՛ վախնար, ո՛վ Յակոբի մնացորդ, փոքրաթիւ Իսրայէլ, ահա ես կ'օգնեմ քեզի», - կ'ըսէ Իսրայէլի Սուրբ Աստուածը, որ քեզ պիտի փրկէ:

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԱՅԵՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԷՆ (7.11-25)

Գիտենք թէ Ղեւտացիներու քահանայութիւնն էր հիմը սրբութեան այն օրէնքին որ Իսրայէլի ժողովուրդին տրուեցաւ: Արդ, եթէ կարելի ըլլար այդ քահանայութեան միջոցաւ կատարելութեան հասնիլ, Աստուած ի՞նչ պէտք պիտի ունենար նոր քահանայապետ մը տալու Մելքիսեղեկի օրինակով եւ ո՛չ Ահարոնի քահանայութեան շարունակութենէն: Միւս կողմէ, քահանայութեան փոխուելուն հետ սրբութեան օրէնքն ալ պէտք էր փոխուէր. որովհետեւ Քրիստոս, որուն մասին կը խօսուի, կը պատկանէր ուրիշ ցեղի մը, որուն անդամներէն ո՛չ ոք քահանայութեան պաշտօնը ստանձնեց երբեկիցէ: Արդ, յայտնի է թէ մեր Տէրը Յուդայի ցեղէն էր, մինչդեռ այդ ցեղէն գալիք քահանայութեան մը մասին Մովսէս ռեւէ բան չըսաւ:

Փոփոխութիւնը աւելի բացորոշ է անով՝ որ կը յայտնուի քահանայ մը որ Մելքիսեղեկի նման է. այսինքն՝ մարմնաւոր կեանքի յատուկ օրէնքներու եւ կարգերու համաձայն չէ՛ որ քահանայ եղած է, այլ՝ յաւիտեանական կեանքի մէջ ի զօրու եղող օրէնքով: Անոր մասին վկայեց սաղմոսագիրքը, ըսելով. «Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեղեկի պէս»: Բացայայտ է, թէ նախկին պատուիրանը մէկզի կը դրուի,

... ես՝
բու Տէր
Աստուածդ,
բու ձեռքդ
բռնած եմ
եւ քեզի
կ'ըսեմ. «Մի՛
վախնար,
պիտի օգնեմ
քեզի»:

անգոր եւ անօգուտ ըլլալուն համար, որովհետեւ Օրէնքը չկրցաւ ոեւէ բան կատարելութեան հասցնել. եւ հիմա աւելի լաւ յոյս մը տրուեցաւ մեզի, որով Աստուծոյ կը մօտենանք:

Աւելին, այս նոր քահանայութիւնը երզումով տրուեցաւ, մինչդեռ միւսներուն քահանայութիւնը երզումով տրուած չէ: Քրիստոս քահանայ եղաւ Աստուծոյ երզումով, ինչպէս սաղմոսագիրքը կ'ըսէ.

“Տէրը անդառնալի երդում ըրաւ, ըսելով.-

Դուն յաւիտեան քահանայ ես, Մելքիսեդեկին պէս”:

Եւ այսպէս, Յիսուս գերազանց ուխտի մը երաշխաւորը եղաւ: Ի վերջոյ, միւս քահանաները թիւով շատ կ'ըլլային, որպէսզի մէկուն կամ միւսին մահով քահանայութիւնը չընդհատուէր: Բայց որովհետեւ Յիսուս յաւիտեան կ'ապրի, իր քահանայութիւնն ալ անվախճան է: Ուստի նաեւ կրնայ վերջնականապէս փրկել անոնք որոնք իր միջոցաւ Աստուծոյ կողմէն, որովհետեւ միշտ կենդանի ըլլալով՝ տեւաբար բարեխօս կ'ըլլայ անոնց համար:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ

(19.11-28)

Մինչ ժողովուրդը անոր ըսածները մտիկ կ'ընէր, Յիսուս իր խօսքը շարունակեց, եւ Երուսաղէմի մօտեցած ըլլալով ու գիտնալով որ ժողովուրդը կը կարծէ թէ Աստուծոյ արքայութիւնը շուտով պիտի յայտնուի, հետեւեալ առակը պատմեց անոնց.-

«Ազնուական մարդ մը կար, որ հեռաւոր երկիր մը գնաց, որպէսզի թագաւորական իշխանութիւն առնէ եւ իր երկիրը վերադառնայ: Նախքան մեկնելը, կանչեց իր տասը ծառաները եւ իւրաքանչիւրին հարիւր արծաթ դահեկան տուաւ եւ ըսաւ. “Շահարկեցէ՛ք այս դրամը մինչեւ վերադարձս”: Բայց իր քաղաքացիները կ'ատէին զինք. հետեւաբար պատգամաւոր զրկեցին իր ետեւէն, ըսելով. “Չենք ուզեր

որ ան մեր վրայ թագաւոր դառնայ”:

Երբ որ ազնուականը թագաւորական իշխանութիւնը առաւ եւ վերադարձաւ, անմիջապէս կանչեց իր ծառաները, որոնց դրամ տուած էր, գիտնալով համար թէ ի՛նչ շահած են: Առաջինը եկաւ եւ ըսաւ. “Մէկ տուածիդ դէմ տասը շահեցայ”: Տէրը ըսաւ. “Ապրի՛ս, բարի ծառայ, քանի այդ փոքրիկ բանին մէջ հաւատարիմ գտնուեցար, ահա քեզ տասը քաղաքներու վրայ կառավարիչ պիտի նշանակեմ”:

Երկրորդ ծառան ալ եկաւ եւ ըսաւ. “Մէկ տուածիդ դէմ հինգ շահեցայ”: Տէրը ըսաւ. “Քեզ ալ հինգ քաղաքներու վրայ կառավարիչ կը նշանակեմ”:

Երրորդը եկաւ եւ ըսաւ. “Տէ՛ր, ահաւասիկ տուած դրամդ, զայն պահեցի թաշկինակի մը մէջ ծրարած: Կը վախնայի քեզմէ, որովհետեւ խիստ մարդ մըն ես: Կ'առնես ինչ որ քուկդ չէ եւ կը հնձես ինչ որ չես սերմանած”:

Տէրը անոր ըսաւ. “Չա՛ր ծառայ, քու խօսքովդ քեզ պիտի դատեմ: Քանի գիտէիր որ կ'առնեմ ինչ որ իմս չէ եւ կը հնձեմ ինչ որ չեմ սերմանած, ինչո՞ւ ուրեմն դրամս սեղանաւորներուն չտուիր, քանի գիտէիր նաեւ թէ վերադարձիս զայն տկոսով միասին պիտի պահանջէի”:

Ապա սպասաւորներուն ըսաւ. “Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր որ տասնապատիկը շահած է”: Անոնք ըսին. “Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի”:

“Գիտցէ՛ք,- ըսաւ ան,- ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողին պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ:

... ունեցողին
աւելիով
պիտի
տրուի, իսկ
չունեցողէն
պիտի
առնուի
նոյնիսկ իր
ունեցած
ամենէն փոքր
բաժինն ալ:

“Առէ՛ք իրմէ դրամը եւ տարէ՛ք տուէ՛ք անոր որ տասնապատիկը շահած է”:

Անոնք ըսին. “Տէ՛ր, անիկա արդէն տասնապատիկը ունի”:

“Գիտցէ՛ք,- ըսաւ ան,- ունեցողին աւելիով պիտի տրուի, իսկ չունեցողին պիտի առնուի նոյնիսկ իր ունեցած ամենէն փոքր բաժինն ալ: Իսկ իմ թշնամիներս, որոնք չեն ուզեր որ իրենց թագաւոր ըլլամ, հոս բերէ՛ք եւ իմ ներկայութեանս սպաննեցէ՛ք զանոնք”»:

Այս խօսքերը ըսելէ ետք Յիսուս շարունակեց իր ճամբան դէպի Երուսաղէմ:

